

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՅ

ՏԱՂ Ի ԳԵՐԵՋՄԱՆՍ

ԱՌ ՀԻՊՊՈԼԻՏՈՍ ՊԻՆԴԵՄՈՆՏ



Քաջածանօթ է ազգայնոց բանասիրաց թարգմանութիւն Գերեզմանացն
Փոսկոլեայ քերթողի, արարեալ 'ի հանգուցելոյ Հ. Արսէն վարդապետէ Բա-
զրատունւոյ կրօնակից եղբօրէ մերմէ : Այլ քանզի բնագիր տաղիս մթին է յոյժ,
վսեմ՝ ոճ թարգմանչին՝ դժուարիմաց եւ ոչ դուն ուրեք առնէ զայն . վասն որոյ
բանասիրաց ոմանց իղձք միւս այլ պարզագոյն թարգմանութիւն ունելոյ զտա-
ղին, եւ զպատասխանւոյ եւ նորին 'ի Պինդեմոնտայ՝ հարկեցուցին զիս զիջանել
'ի հայցուած նոցա :

- Ի ստուեր նոճից ի մէջ շիրմաց ըսփոփելոց յարտասուս
Նըւազագոյն արդեօք քընոյ մահուն իցէ դառնութիւն .
Թորժամ՝ ոչ եւրս բըղխեսցէ ինձ արեգակն ընդ երկիր
Ըզկենդանեաց եւ ըզբուսոց չըքնաղագեղ ազգատոհմ,
5 Ուր ինձ ոչ եւս գեղեցկայոյս պարեսցեն ժամք ապառնիք,
Թորժամ՝ ոչ եւրս զերգ քոյին լըւայց, քաղցրիկ բարեկամ,
Եւ զտըխրագին դաշնակն՝ որ զայն յարմարաւոր յօրինէ,
Թորժամ՝ ոչ եւս հոգին կուսից յիս մոլսայից խօսիցի,
Եւ սիրոյն՝ որ նըժգեհեալ կենացս է շունչ եւ ոգի,
10 Ձի՛նչ ըսփոփումն ինձ փոխանակ կորուսելոցս է աւուրց
Վէ՛մ որ զիմս որոշեցէ յայլոց անթիւ ոսկերաց,
Զորս ընդ ծով եւ ընդ ցամաք սերմանէ մահ ցան եւ ցիր :
Այո՛ ով իմըս Պինդեմոնտ, յոյսն իսկ յետին դիցունհի
Խոյս ի շիրմաց տայ . զամենայն ինչ ի գիշեր իւր սուգէ
15 Մոռացութիւն . մըղէ ոյժ իմն ազդոյ վարեալ յարաշարժ
Ըզհամագոյս, եւ զմարդ շիրմօքն հանդերձ եւ զհուսկ իսկ յետին
Տիպ եւ նըշխար երկնի ու երկրի այլակերպէ ժամանակ,
Այլ ընդէր կանխիցէ մարդ մահկանացու ի զըրկել
Զանձն ի յուսոյն ողորանաց՝ որ ի մահուն իսկ նըմա
20 Ըզկայ ի սեամբս դըժոխոց թարթափելով տայ առնուլ .
Միթէ չիցէ նա ընդ երկրաւ իսկ կենդանի՝ ի լըռել
Պարերգութեան օրակըչիւ արեսուն շուրջ ըզնովաւ .
Եթէ ի սիրտ իւրոցն ազդել կարէ զայն քաղցըր խնամովք :

- Գերաշխարհիկ իմն է սիրոյ սրբտից այս սէր փոխադարձ .
- 25 Եւ շնորհ երկնից՝ որով յաճախ ընդ հանգուցեալս մեր կեամբ
 ընդ սիրելիս , եւ հանգուցեալքն ընդ մեզ լինին կենակիցք ,
 Եթէ երկիր բարեգործով՝ որոյ զնոսա ընկալեալ
 Սընոյց մանկունս , ի մայրենի ծոց իւր վերջին ապաւէն
 Տըւեալ նոցա՝ զնըշխարս իւրեանց սուրբ ի հինից ամպրոպաց
- 30 Եւ յամպարիշտ ոտից ռամկին կոխոտելոյ առնիցէ ,
 Վիմի զանուն նոցա պահեալ , եւ զովացիկ հովանեալ
 Ի բոյր ծաղկանց գըթասիրի ծառոյ զաճիւնն ըսփոփեալ ,
 Որոյ սիրոյն իւրոյ չիցէ թողեալ ժառանգ , նա եւեթ
 Յիւրում չիրմի ոչ ըսփոփի . եւ ՚ի մարմնոյն յուղարկել
- 35 Հայի զոգի իւր թափառեալ յախերոնեան կայս ի կոծ ,
 Կամ ընդ Էին թեւով մեծաւ ողորմութեանն ապաստան .
 Այլ լըքանէ զաճիւնն ի հող տատասախիտ ամայի ,
 Ուր ոչ հարսըն սիրատարփ մատուցանէ պաղատանս ,
 Ոչ մենաւոր ոք անցաւոր ընդ այն լըսէ զհեծութիւն՝
- 40 Զոր ի խորոց անտի չիրմաց վերառաքէ մեզ բնութիւն :
 Եւ սակայն արդ ի բարեգութ աչաց ի բաց օրէն նոր
 Բզգերեզմանըս սահմանէ , առնէ զմեռեալս անանուն :
 Առանց չիրմի կայ պաշտօնեայն քո անկեալ ո՛վ թալիս ,
 Որ քեզ ի յարկ իւր աղքատին անդուլ ի սէր սնուցանէր
- 45 Դափնի , պըսակըս կախելով քեզ եւ ըզքեզ երգելով .
 Եւ դու ի զուարթ ժըպիտ քոյին պըճնէիր զերգըս նորին ,
 Որովք Լանգուրտն յանդիմանեալ Սարդանաբալ կըշտամբէր ,
 Ում քաղցր եզանց է լոկ բառա՛յ որք յԱրդուական անձաւոց
 Եւ ի յուղիսիցըն Տիկինեայ յօրացուցեալ ի խորտիկ ,
- 50 Ի հանգիստ ըզնա ի յոյլ կացուցանեն երջանիկ :
 Ո՛ւր ես Մուսայդ չըքնաղագեղ , ընդէր բուրումըն քոյին ,
 Աստուածութեանըդ ցոյց , չազգի ի ծառաստանս ուր բազմիմ ,
 Եւ առ յարկն իմ մայրենի անձկակարօտ հառաչեմ :
 Եւ դու եկեալ անդ ժըպտէիր նըմա թըմբւոյն ի ներքոյ
- 55 Որ ըզսաղարթսն խոնարհեալ հեծեծէ ո՛վ դիցունհի ,
 Զի ոչ եւս արդ կարէ ծածկել ըզգերեզման ծերունւոյն :
 Որում երբեմն ըզհովանի իւր ընծայէր ի հանգիստ :
 Իսկ դու թերեւս ի խառնաղանձ դամբանըս շուրջ ակն ածեալ
 Խընդրես թէ ո՛ւր հանգիցէ զլուխ պատուական քոյդ Պարինեայ .
- 60 Նըմա քաղաքըն պակշտեալ վատ քերթողաց հրապուրող
 Զեռ ի պարիսպ իւր հովանի , ոչ ներբողեան ինչ , ոչ վէմ :
 Թերեւս յարկն իւր աւաղակըն կառափնատ , որ եթող
 Զոճիրսն ի բեմ պատուհասին , զաճիւն նորա շաղախէն
 Ի քարակոյտս և ի կոճեղս անդ ըսկընդիկըն լըքեալ

- 65 Սովալըլուկ թափառական ընդ խորափորս ի կաղկանձ
փորէ թաթիւք իւրովք զերկիր . յոպոպն որ խոյս ի լուսնոյ
Տըւեալ ի գանկ նորին ծածկէր՝ անտի արտաքս յարձակեալ
Ըզհամասփիւռ . յեղերական դաշտին ճախրէ ըղխաչիւք .
Եւ գանգատի ժանտըն տըրտում՝ հեկեկանօք զաստեղաց
- 70 Ի մոռացեալս անդր ի շիրիմըս գըթութեամբ ծագելոյ .
Զուր մաղթես աստուածուհիդ ի տըխրագին գիշերոյ
Յօղ ի վերայ քում՝ քերթողի . ո՛հ ի վերայ մեռելոց
Ոչ ընձիւղէ ծաղիկ , ուր ոչ մահկանացուաց դրուատիք ,
Ուր ոչ ըսպաս մեծարանաց հարցեն սիրոյ արտասուք :
- 75 Երմէհետէ ետուն ատեանք եւ հարսանիք եւ սեղանք
Էրէոյ մարդադիմի գըթալ անձին եւ այլոց ,
Փրկէին ի ժանտ օդոց ու ի գազանաց կենդանիք
Զողորմն ածիւն սահմանեալ յար ի բնութենէ բարձր ի կէտ .
Վըլկայ վիպաց էին շիրիմք , էին բագինք զաւակաց
- 80 Ուստի պատգամք ընտանեկաց ելանէին թերափոց ,
Եւ ի նըշխարս հաւուց երդումն էր ահաւոր . կրօնք՝ զոր գութ
Եւ լաւութիւնք հափց պահեցին պէսպէս ծիսիւք յամս յամայր :
Ոչ ըզտաճարըս միշտ շիրիմք սալայատակ ծածկէին ,
Ոչ խունկ ընդ նեխ դիոց խառնեալ զաղօթաւորըս պըղծէր ,
- 85 Եւ ոչ քաղաք ի նկարակերտ կըմախս 'ի սուգ համակէր .
Ընդոստ ի քնոյ մայր ահաբեկ կարկառէ մերկ ըզբազուկ
Ի ստընդէին սիրեցելոյ ի գլուխ՝ զի մի զարթիցէ
Յերկարաձիգ հեծութենէ հանգուցելոյն՝ որ հայցէ
Զաղօթըս սըրբութեան ի ժառանգացըն տըրոց :
- 90 Այլ եղեւինք եւ նոճք ի սուրբ տողորեալ ծուխ ըզգեփիւռ ,
Սըփոէին ըզշիրմօք մըշտադալար հովանի
Ի յիշատակ յաւերժական , եւ կօշարայք մեծագինք
Ամփոփէին ըզսիրեւեաց նոցին արտօսը արգադիր ,
Որոց առեալ կայծ ի յարփուոյն ի ստորերկրեայն ի գիշեր
- 95 Ածէին լոյս . զի խընդրեն լոյս աչք ի մահուն եւ զվերջին
Հառաչ առ լոյսըն փախըստեայ հանէ օրհաս ի սըրտէ :
Անթառամք եւ մանիշակք ի հող մահուն բողբոջէին .
Ծաղկափըթիթք ի գնացըս ջուրցըն քաւութեան ուռդեալք .
Եւ որ ըզկաթն հեղոյր ի նուէր եւ բազմէր անդ ի պատմել
- 100 Սիրելեացն հանգուցելոց զաղէտըս իւր , ըզմայլէր
Ի հոտ անոյշ որպէս ի սիւգ երանեւեացըն դաշտաց :
Մոլութիւն բարեպաշտիկ՝ որ բըխտանեացըն կուսից
Սիրելի առնէ զդամբանս արուարձանեայցըն դրախտից .
Ուրանօր մօր կորուսելոյ առաջնորդէ նոցա սէր ,
- 105 Ուր զհրեշտակսըն հաշտս ի գարձ աղերսեցին վեհագին

- Որ ըզնաւուն նըւաճելոյ եհատ զըստուար եղեւին ,
Դազաղս անդըստին առ ի հանգիստ իւր փորեալ .
Այլ ուր տենչ արութեանց վեհից նիրհէ , ուր դողումն
Եւ ճոխութիւն քաղաքական կենաց լինին պաշտօնեայ ,
1410 Անդ մահարձանք եւ դըժոխոց դրոշեալ պատկերք եւ շիրիմք
Մարմարակուռք յառնեն 'ի զուր կանգնին տօնից հանդիսիւք :
Ճոխն և գիտուն , եւ գեղանւոյն իտալիոյ շուք եւ միտք ,
Ազատագունդըն կայ թաղեալ ահաւասիկ կենդանւոյն
Յարքունիս՝ ուր փաղաքուշ շընթէ շողում մարգելոյզ ,
1415 Եւ ներբողեան է նմա կընիք ազգատոհմին եւեթ անդ :
Իսկ մեզ մահ պատրաստեսցէ խաղաղաւէտ օթեւան
Այն ինչ բաղդ տացէ դադար դամ՝ մի ի վրէժ խընդրելոյ ,
Եւ բարեկամ ընդունիցի ժառանգութիւն ոչ գանձուց ,
Այլ սերտ սիրոյ , եւ օրինակ ազատաձեռն տաղից :
1420 Շիրիմք քաջազանց ի մեծամեծս յորդորեն
Ըզսիրտ արի , ով Պինդեմոնտ , և սրբբանուէր եւ սիրուն
Ընծայեն հիւրոց ըզվայրս ասպընջականըս նոցին :
Ի տեսանել իմում՝ երբեմն ըզգերեզմանն՝ ուր հանդչի
Վեհին դիակն՝ որ զարքայից սանձահարեալ գաւազան ,
1425 Տերեւաթափ ըզսարդենիս նոցա արար՝ յայտնելով
Տիեզերաց քանի արտօսը անտի կաթէ եւ արիւնս ,
Եւ ըզտապան նորին՝ որ միւս այլ Ոլիմպոս երկնայնոց
Կառոյց ի Հռովմ՝ եւ զայնորիկ՝ որ ընդ երկնի խորանաւ
Ետես յորով աշխարհըս ճախը առեալ , ետես զարեգակն
1430 Անշարժ՝ ըզճառագայթսըն սըփռելով ի նոսա ,
Եւ կանխեաց հորդել ուղի անգլիացւոյն ընդ եթեր
Այնպէս յանդուգն ընդ այն ի ճեմ՝ սաւառնաթեւ սլանալոյ ,
Քեզ երանի յայնժամ երկիր իտալիոյ կարդացի
Վասն երջանիկ կենսակայլակ օդոց եւ ջուրց վըտակաց՝
1435 Զորս ի սնարից իւրոց ի քեզըդ ծաւալէ Ապենին .
Լուսինն ի քոյդ բերկրեալ այեր՝ պըճնէ ի լոյս իւր վըճիտ
Ըզդարեւանդըս քո ի կուծս այգեատանեայց զուարճացեալս ,
Եւ բնակաւէտք ըզքեւ հովիտք ձիթաստանեօք եւ շինիւք ,
Խունկս ի բիւրուց խառնեալ ծաղկանց վերածըխեն ընդ երկին ,
1440 Եւ քեզ նախ ո՞ Փլորենտիա երգն այն եղեւ լըսելի ,
Որ ըզզայրոյթ փախըստէին Գիբելլինի սթափեցոյց .
Եւ դու ըզճնօղսըն սիրելիս պարգեւեցեր եւ զբարբառ
Կալիփոպեան քաղցըր շըրթանն այնմիկ՝ որ զմերկն յելլադա
Եւ զմերկն ի Հռովմ՝ ըզՍէր ի քօղ պարածածկեալ ի սպիտակ ,
1445 Պայծառագեղ զայն երկնայնոյն դարձոյց ի գիրկս Աստղկան :
Այլ առաւել քեզ երանի զի պահպանես ամփոփեալ

- ի մի տաճար զիտալական պարծանս , թերեւս ըզմիայն՝
Յորմէհետէ Ալլաիք լըքեալ , և դարձադարձ զօրութիւն
էիցս ի քէն բախտի զսեղան , ըզգէն եւ զգոյս եւ զգաւառ .
150 Եւ զամենայն , բաց 'ի փառաց յիշատակէ , կողոպտէր : .
Ձի ուր ի յոյս փառաց իտալք ու արիական վառին միտք ,
Անտի մեզ բեր հանցուք հրմայս : Յաճախ ի վէմն յայսոսիկ
Գայր վիկտոր ընդ հայրենիսն ցասուցեալ ընդ սեղանս ,
Անմըռունչ թափառական ուր յառաւել ամայոջ
155 Գետահետէ Արնոս . եւ կայր ընդ դաշտորայս պըշուցեալ
Եւ ընդ երկին , առ ի վերուստ ներշնչութեան անձկաւէտ :
Եւ մինչ ոչ տիպ ինչ կենդանի սփոփէր ըզհոգըս նորին ,
Անդ անողոքն հանգչէր՝ մահու դալուկն ի դէմն իւր եւ յոյս ,
Ընդ վեհիցն այնոցիկ եղեալ յաւէժ բնակակից .
160 Անդանօր մռնչեն ոսկերք դեռ եւրս սէր հայրենեաց ,
Օն և ճն խօսի ի սուրբ խաղաղութեան անդ հոգին՝
Որ սնուցանէր ի Մարաթոն ոտիս ընդդէմ պարսկայնոց —
Ուր շիրիմս Աթէնք ի նուէր իւրոց քաջացն կանգնեաց —
Ըզցասումն ելլադական և ըզհըզօր զօրութիւն :
165 Նաւորդ ընդ ծովն ընդ այն քերեալ առ Եւբիաւ անցաւոր
Փայլատակունըս տեսանէր ընդ լայնատարրը խաւար
Թօթափեալ սաղաւարտից եւ շկահելոց սուսերաց ,
Ծուխըս հրեղէնս ի խարովից անտի ի վեր դիզացեալ ,
Եւ դիմելոց ի պատերազմ նահատակաց երեւոյթ ,
170 Վառելոց համակ ի գէն երկաթակուռ տեսանէր ,
Եւ յարհաւիրըս լռութեան գիշերայնոյ ծաւալէր
Երկայնաձիգ դըղորդ ընդ դաշտըս խառնամբոխ փաղանգաց .
Փողոց գոչին , սըմբակակոխ երիվարաց ասպատակ
Ոտնատրոփ ընդ սաղաւարտըս կիսամեռ անկելոց ,
175 Ողբումն եւ նուագ , եւ դրստերացն Պարկայից եղերերգ :
Երանի քեզ , ո՛հ Հիպպոլիտ , որ ի դալար տիս քոյին
Ընդ անոլորտ սահմանս հողմոց ընթանայիր . եւ արդեօք —
Եթէ երբէք վարեաց ըզկայմ՝ քո նաւուղիդ անդր ի բաց
Քան ըզկըզկիս եգէականս — լրար զհամբաւ անդանօր
180 Ընդ եզերս ելլեսպոնտեայ զանցիցն վաղ անցելոց
Եւ ըզգոչին ալեաց՝ որ զգէնս Աքիլլեայ անդր ածէին
Ի հռետեան ծովափունս առ ոսկրոտին Էասայ :
Արդարակչիռ առ քաջազունըս մահ բաշխող է փառաց .
Ոչ խորագէտ հանճար եւ ոչ թագաւորաց ինչ շընորհք
185 Պահեցին իթակացւոցն ըզկողոպուտն անառիկ .
Ձոր ալիք յանդընդայնոց դիցն դըրդեալք թափեցին
Ի տարադէմ լաստափայտին յափըշտակեալ ի խելաց :

- Եւ ինձ՝ զոր սէր փառաց և իրք ժամանակիս ըստիպեն
Գրնալ ընդ ազգս եւ ընդ ազիներս փախըստեայ՝ օն Մուսայք
190 Խորախուսիչք մահկանացուաց մըտաց տացեն ինձ հրաւեր
վերակոչել ըզդիւցազունս : Նրստին շիրմացըն պահակք ,
Եւ ուրանօր ցըրտին թեւովքն թօթափէ ժամանակ
Ջաւերակս իսկ ըզնոցին ի բաց , ուրախ երգովք անդ Պիմպլայք
Ջանապատս ամայիս ուրախ առնեն , ի գեղգեղ
195 Ներդաշնակ յաղթանակեալ բիւրուց դարուց լրութեան :
Յակօսաբեկն արդ ի Տրովա փայլէ հիւրոց վայր յաւերժ ,
Յաւերժ յանուն յաւերժհարսինն հարսնացելոյ Դիոսի ,
Որ ետ զաւակ նըմա զԴարդան՝ յորմէ Տրովա ու Ասսարակ
Եւ սրըսկապապանքն յիսուն , եւ գահ յուլեան ազին եկն ի լոյս :
200 Զի ի լրսել ելեկտրայ զձայն օրհասաբեր Պարկային՝
Որ զնա կոչէր ի կենսական օդոց աստի կենցաղոյս
Յելիսական պարս , առ Դիոս աղերս յետին արար զայս .
Եթէ հաճոյ եղեն քեզ վարսք իմ , եթէ քեզ սիրելի
Դէմք իմ և քաղցրը տըքնութիւնք , և լաւագոյն ինչ ինձ վարձ
205 Ոչ ներեն կամք ճակատագրին , գէթ հայեսձիր դու յերկնից
Ի սիրելիդ քոյին մեռեալ , որպէս զի մի կորիցէ
Համբաւ քոյոյդ ելիկտրայ : Եւ աղօթեալ զայս , մեռաւ :
Հեծեաց Ոլիմպ ընդ այն . եւ գլուխն անմահական ակնարկեալ ,
Ամբրոսային ցօղ ի վարսիցն ի յաւերժարսն իւր ցօղեաց ,
210 Ըզդիակըն նորին սրբազանեալ եւ զշիրիմ :
Անդ հանգեաւ եւ Երէթոն , անդ եւ Իլեանըն նընջէ
Աճիւն արդար . Իլիուհեաց , ոհ , անդ ի զուր հերարձակ
Աղերսելով մերժել յարանց իւրեանց ըզմահ մօտալուտ :
Անդ կասանդրա , յազգել ի սիրտ նորին եւ տալ նըմա դից
215 Գուժել զօրհաս Տրովադայ , եկն առ ուրուս նըւագել
Երգ սիրատարի . եւ պարագլուխ եղբօրորդեացըն կացեալ
Ի սիրոյ եղերերգ ըզպատանեակսըն մարգէր ,
Եւ յոգւոց հանեալ ասէր . Եթէ երբէք ձեզ երկինք ,
Ոհ , շնորհեսցեն դարձ յԱրգոսէ , ուր ըզՏիթեան զաւակին
220 Ուր զլայերտեան որդւոյն մընայ ձեզ արածել ըզձիւն .
Զուր ըզգաւառ ձեր խընդրիցէք . որմունք փրբեան դաստակերտք
Ընդ փլատակօքըն ծըխեսցեն , այլ ի շիրիմս յայնոսիկ
Կացցեն թերափք Տրովադայ . զի շնորհք են դից պահպանել
Ի տառապանս իսկ զանուն պերճ : Եւ դուք արմաւք եւ նոճիք ,
225 Որ ի նուոցըն Պրիամու տընկազործեալ , եւ աւանդ ,
Յարտօսր այրի մնացելոցն ուռգեալ վաղ աճիցէք ,
Լերուք իմոց հարց հովանի . եւ որ խնայէ ըզտապար
Ի սրբանուէր կողերցըդ՝ մի հասցէ նմա սուգ ընտանեաց ,

- Նա անարատ ձեռք լիցի հուպ ի սեղան սրբութեան :
- 230 Լերուք իմոց հարց հովանի . գայցեն աւուրք՝ զի մուրիկ
 Թափառեալ կոյր ընդ հովանեօքըդ վաղեմեօք առ խարխափ
 ի դամբարան անդրը մըտցէ արկանել գիրկս ըզջիրմօք ,
 Մատուցանել նոցա հարցուած : Եւ յայնժամ խորք անձաւոց
 Հանցեն հառաչ , եւ գերեզմանք առ հասարակ պատմեացեն
- 235 Անկեալ երկիցըս կործանեալ հարթայատակ զիլիոն ,
 Եւ զլուռ ուղեօք երկիցս անդրէն վերականգնեալ զայն փառօք ,
 Ճակատադրեալ Պեղանց չըքեղ եւրս վերջին յաղթանակ :
 Ըզտըրտմալից հոգիսն հաշտ երգովք իւրովք արարեալ
 Սուրբ երգողին , անմահ զարքայսն արգիացիս կացուցէ
- 240 Ընդ երկիր՝ որքան մեծն ընդգրկէ հայրն Ովկիան :
 Եւ քեզ , Հեկտոր , տացին ողբոց փառք ուր ուրեք իցէ սուրբ
 Եւ շարժեացէ զարտօսը արիւն հեղեալ ի փառս հայրենեաց ,
 Յորքան արփւոյն լոյս ի յաղէտըս մահացուաց ծագեացէ :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

5. Թէ աստ և թէ զինի 'ի տողն 22 , ակնարկէ քերթողն 'ի պիթագորեան իմաստասիրութիւն ,
 որ դաշնակա իմն նուագաւորս գնէր 'ի շրջանս լուսաւորաց :
6. Իմա զՊինդեմոնտ բարեկամ քերթողիս :
9. Զի 'ի նժգեհութեան կեայր քերթողս :
23. Զի և մեռեալք 'ի միտս կենդանեաց զարթոցանելով զյիշատակ իւրեանց , համարին յե-
 ղանակաւ իմն ունել կենդանութիւն :
35. Աիւերս կոչեն զգժոխս քերթողք հինք :
41. Ի սկիզբն ժԹ դարուս արգելան յԽտալիա գերեզմանք առանձնաւորք , և խառն 'ի խուռն
 Թաղէին մեռեալք :
43. Ակնարկէ 'ի Յոփսէփ Պարինի քերթող անուանի ; որ անմահ քերթուածովքն՝ որպէս թէ
 անթառամ դափնեաւ և պսակօք մեծարէր զԱպոլոն զդիս բանաստեղծութեան , և մանաւանդ զԹա-
 լիա՝ զմին յիննեցունց անտի Մուսայից , որք ազգի ազգի քերթութեանց համարէին վերատեսուչք ,
 և Թալիա կատակերգակ և երգեծական քերթութեանց . քանզի մի 'ի գլխաւոր քերթութեանցն
 Պարինեայ է օրն մակագրեալ , յորում ետերէ զծանծաղամիտ և զսխաւոր մեծատունս :
47. Սարգսնաբալ իմա զգալատեալս 'ի շուայտութիւն եւ 'ի հեշտութիւն . Լաֆոսարդ զԼոնգո-
 բարտացի . Աբդուսիս յԱբդուա գետ Լոնգոբարտիոյ պատկանեալ . իսկ Տիֆիսոս գետ 'ի վերնակողմն
 Իտալիոյ :
52. Ծառաստան իմա զանտառակն թմբի ծառոց յարեւելից Մեդիոլանու , ուր յաճախէին
 Պարինի :
53. Ակնարկէ 'ի Զանկինթոս կղզի՝ ուր ծնեալն էր Ֆոսկոլոյ , և կեայր յԽտալիա . ուստի առա-
 վան աղատասիրութեանն վտարանդի եղև :
54. Բարբառի առ Մուսայն վերատեսուչ քերթութեանն Պարինեայ :
68. Քանզի խաչք փայտեղէնք ի վերայ գերեզմանաց կանգնին :
75. Այսինքն յորմէհետէ կրօնք և քաղաքական օրէնք զանամնամիտ մարդիկն ածին 'ի զգօ-
 նութիւն :
78. Այլ օրինակք բնագրին փոխանակ alti sensi , ունին altri sensi , ըստ որոց Թարգմանէ Բա-
 գրատունին :
79. Զի ի վաղնջուց ժամանակաց մինչև յաւուրս հոգովայեցուց կանգնէին առ գերեզմանօք
 բազինք գից :

80. Թէրաթէ էին դիք ընտանեկանք, զի համարէին ոգիք լաւաց կալ 'ի տունս իւրեանց 'ի պաշտպանութիւն ընտանեացն:
83. Զի մինչև ցաւուրս մեր յիտալիա ընդ սալոյատակաւ եկեղեցեաց թաղէին մեռեալք:
93. Զի արտասուք սիրելեաց 'ի շիւս ամփոփեալ թաղէին ընդ վախճանեալս, և կանթեղ 'ի միտին նշանակ անմահութեան հոգւոյ:
96. Որպէս և Վերգիլ զԻրգեայ գշտոյէ երգէ:
99. Սգաւորք բազմեալ առ բազնօք 'ի գերեզմանս, հեղուին կաթն և անսպակ 'ի նուէր՝ պատմելով զաղէտս իւրեանց:
101. Գերեզմանատեղիք յԱնգլիա ճեմելք են հասարակաց, զարդարեալք իբրև զգրախոս ծաղկամբք և ծառովք:
105. Այսինքն Նելսոնի ծովակալին Անգլիացւոց, որ կալաւ յԵգիպտոս 'ի Գալլիացւոց նաւ մի մեծ, և 'ի ստուար կայմէ նորա արար իւր դադալս:
108. Դո՛ղւո՛հ յերեսաց բռնաւորութեան և ճո՛ղւո՛հ այսինքն ընչասիրութիւն անձնդիւրութեան և ևթ ծառայեն:
124. Վէհիս Դիւիս, այսինքն Նիկոլայոսի Մաքեաւելեայ:
127. Այսինքն տապան Միքէլանձէլոյի Պոնարոթեայ, որ զգմբէթ եկեղեցւոյ սրբոյն Պետրոսի կառոյց 'ի հռովմ:
128. Այսինքն Գալիլէոսի աստեղաբաշխի, որ եբաց ճանապարհ հեւտոնի: Երիցունց ևս սոցա տապանք են 'ի Փլորենտիա յեկեղեցւոյ սրբոյ խաչին:
141. Գիֆէլէի կոչէ զՏանթէ քերթողահայր Իտալացւոց վասն կուսակցութեան նորա ընդ ազատատեսերս ժամանակին, որ Գիֆէլէիսն կոչէին. և համարի սկսեալ նորա զքերթուած իւր հռչակաւոր 'ի հայրենիս իւր 'ի Փլորենտիա, մինչև աքսորեալ անտի:
143. Այնարկէ 'ի փեթրարքա քերթող, որոյ քաղցրագոյն են տաղք քան զՏանթէի, և որ զսէր անհամեստ համարի համեստացուցեալ 'ի տաղս իւր: Կոչի Կալլիպէս 'ի Կալլիպպայ մոռայէ, որ մի յիննեցունց մոռայիցն է, վերատեսուչ քնարերգական քերթութեանց:
145. Երկու են Աստղիկք, մին երկրաւոր և պիղծ, միւսն երկնային և սուրբ:
148. Ալպեան լերինք պահակք և դրոշմք են Իտալիոյ ընդդէմ հիւսիսոյ:
152. Հրմայս, այսինքն գուշակութիւնս բարիս վասն հայրենեաց:
153. Վիկտոր Ալֆիերի քերթող ողբերգու անուանի, որ 'ի նմին եկեղեցւոյ սրբոյ խաչին թաղեալ կայ 'ի Փլորենտիա, ուր և այլոց աւագաց կան շիրիմք, որոց 'ի կենդանութեան իւրովմ այց առնէր ստէպ:
155. Արնո գետ, որ անցանէ ընդ Փլորենտիա:
161. Հոգին հայրենասիրութեան:
165. Եւֆիա կղզի մերձ 'ի Ծովեզրն, յոր Դարեհ արքայ Պարսից թափեաց զգօրս իւր 'ի պատերազմին՝ որ 'ի Մարաթոն, ուր կանգնեցաւ շիրիմ՝ աթենացւոցն անկեղց 'ի մարտի անդ, ուրաշօր խրխիւնջս ձիոց ասէ Պաւսանիաս լսելի լինել, և երևութանալ ցնորից պատերազմողաց:
175. Պարթաք երեքին քորք՝ որոց համարէին հեթանոսք մանեւ զթեւ կենաց մարդկան, և կան խաճայնել զօրհաս նոցին:
179. Եփէսիոս կղզիք 'ի Ծովուն, որ կոչի Արշիպէլագոս:
180. Ի Ծովեզրս Ելլեսպոնտեայ էին գերեզմանք Աքիլլեայ և Պատրոկլի, և այլոց անկեղց դանայեցւոց 'ի տրովական պատերազմին:
181. ԶՎահանն Աքիլլեայ յանիրաւի պարգեւեալ Ողիսեայ յափշտակեցին ալիք 'ի նաւաբեկութեան նորա, և արկին 'ի գերեզմանն Էսոսայ, որ կայր 'ի հռետեան սարաւանդին 'ի Վոսպորն թրակեան:
194. Պիլադա ևս կոչին Մուսայք 'ի Պիմալլայ լեռնէ, կամ յաղբերէն որ անդ նուիրեալ էր նոցա:
196. Ի Տրովադա, որ արդ մշակեալն է, և ուր համարի դաւեալ արգի ուղեւորաց զգերեզման Իլոսի՝ միոյն 'ի նախահարցն տրովացւոց:
197. Այսինքն յաւերժհարսինն Ելեկտրայ, գտեր Ատլասայ, յորմէ Դարդան և Աստարակ, և 'ի նոցանէ Ենէաս նախահայր Հռովմայեցւոց և հայր Յուլոսի, և 'ի սմանէ ազգն յուլեան և ազգատոհմ՝ Յուլիոսի Կեսարու: Իսկ յիսուն առագաստքն են յինից ուստերացն Պրիամոսի արքային Տրովադայ:

211. Երկբժնին ուսար Դարգանոսի արքային Տրովագայ, իսկ Իլոս ուսար Տրովսի որդւոյ Երկբժնի, յորոյ անուն կոչեցաւ քաղաքն Իլիոն: Առ սոցա շիրմքն կանայք տրովացւոց յԻլիական մարտին պաղատանս վասն արանց իւրեանց հեղուին, գէսս 'ի նշանակ սոյոյ արձակեալ ըստ այնր ժամանակի սովորութեան:

214. Կասանդրա գեղեցկագոյնն 'ի դստերս Պրիամու, մարգարէութի համարեալ:

219. Արածել զձիս էր գործ գերեաց: Տիթեան զաւակն է Դիոմեդ, և Լայերտեայն Ոգիսես, երկգլին ևս անուանիք ընգգէմ արովացւոց:

221. Զի համարի քաղաքն Տրովագայ հիմնարկեալ յԱպոլլոնէ, որ կոչի և Փիբոս, աջակցութեամբ Պոսիդոնի:

230. Մուրիկ կոյր, այսինքն Հոմերոս:

235. Իլիոն միանգամ 'ի հերակլեայ կործանեալ, միւսանգամ յԱմազոնաց, իսկ վերջին սպառնալու աւեր նորա պահեալ Պելեանց, այսինքն Աքիլլեայ և որդւոյ նորա Պիւռոսի:

239. Արգիացի Թագաւորք, այսինքն Իլիսանք Ելլագայ, որ տասնամեայ մարտիւ յաղթեցին արովացւոց, և մինչև ցարդ հռչակին ընդ տիեզերս 'ի Հոմերոսէ:

240. Ովկիանոս համարեալ հայր գետոց և ջուրոց, ուստի և ամենայն կենդանեաց. զի առանց խոնաւոյ չիք սերունդ:

ՍՏԵՓԱՆ ՄՈՒՐԻԼԵՈՅ

Ա

Նախաձաշիկ .

Բլասէնսիա Լսդրամատուրի գեղեցիկ պզտի քաղաք մըն է, և Մաւրիտա նացիք ուրիշ տեղ մը այնչափ երևելի շինուածներ չեն թողուցած, որչափ որ հոս: Ինչուան հիմա ճանապարհորդք պրանչացած կը կենան իր օձապտոյտ ճամբաներուն առջև ու կը դիտեն այն հարիւրաւոր սիրուն պալատները, վասն զի անկարելի է տռնելոռ հասարակ աշունը տալ այն շէնքերուն որ զարդարուած են աղուոր մանր քանդակներով, և աւելի արեւելեան վճկի, քան թէ պարզ մահկանացուի մը ձեռագործ կ'երևան: Եթէ ինչուան մեր օրերն ալ այսպէս է, հապա մտածէ թէ ինչպէս պիտի տեսնուէր Բլասէնսիա վելտասաներորդ դարուն մէջերը, և ինչ տրպաւորութիւն պիտի ընէր երիտասարդի մը վառվռուն և բանաստեղծական երևակայութեան վրայ, որ Բիլլաս աւանին անպաճոյճ եկեղեցիէն և իր չորս կողմի խեղճուկ խողանաչէն տնակներէն զատ ուրիշ բան չէր տեսած: Զար-

մացած, ափշած, կամարէ կամար կ'երթար, ձեռքերը մերթ իրարու կը միացնէր, մերթ կը վերցնէր դէպ 'ի երկինք և այնպիսի բացազանչութիւններ կ'արձրկէր, որոնցմով Սպանիացիք իրենց ամեն յուզմանցը մէջ օգնութեան կը կանչեն արքայութեան բոլոր սուրբերը:

— Սուրբ Աստուածածին և սուրբ Յովսէփ, աս ինչպէս աղուոր է. տէր իմ՝ Յիսուս, ինչ գեղեցիկ տուն. սուրբ Ստեփանոս պաշտպանս, արքայութեան արժանի հրաշալիքներ են ասոնք:

Այս խօսքերը զուրցողը և այսպէս հիացողը Բլասէնսիոյ շէնքերուն վրայ՝ դեռ տասներհինգ տասնըվեց տարեկան տղայ մ'էր, որուն երեսին վրայ կը տեսնուէր այն այրական և արեակէզ գեղեցկութիւնը որ սեփական է Սպանիոյ լեռնցիներուն: Մեծահասակ, կայտառ և բարեչափ, ամենէն պզտիկ շարժմունքներէն ալ բնական վայելչութիւն մը դուրս կը ցատքէր: Անտալուսիոյ գեղացւոց պէս չնորհալի զգեստ մը հագած, Գոյնգոյն բուրդէ պարկ մը զարկեր էր ուսը, որուն մէջ կը տեսնուէր որ խիստ քիչ բան կայ:

Երբոր ամեն տեղ պտրտեցաւ, ամեն բան տեսաւ ու ամեն բանի վրայ զարմացաւ, գնաց նստաւ վանքի մը սան-